<< ՈՒՐԻՇ ԹԱՏՐՈՆ>>

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԲԻԶՆԵՍ ՊԼԱՆ

ԻՆՉ Է << ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ >> -Ը

ՈՐՏԵՂԻՑ Է ԱՌԱՋԱՑԵԼ <<ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ>> ՀԻՄՆԵԼՈՒ ԳԱՂԱՓԱՐԸ

Ես Սերինե Ասատրյանն եմ, սովորում եմ <<Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ>> -ում մարքեթինգ մասնագիտությամբ: 2022թ հուլիսի 5-11-ը մասնակցել եմ Գերմանական <<Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ)-համագործակցություն Հարավային Կովկասում>> ծրագրի շրջանակում <<Բիզնես և Կրթություն>> Ասոցացիա ՀԿ-ի կողմից, իրականացված <<Ամառային ճամբար / բիզնես դպրոց 2022>> ծրագրին, որը նպատակ ուներ.

- Համախմբել Երևանի և մարզերի աշակերտներին և ուսանողներին, նրանց բերել մասնագիտական երկխոսության դաշտ
- Նպաստել աշակերտների և ուսանողների մասնագիտական կողմնորոշմանն ու դեպի աշխատաշուկա ուղղորդմանը
- Հնարավորություն ընձեռնել աշակերտների և ուսանողների միջև ստեղծելու սերտ աշխատանքային մթնոլորտ՝ հետագա համագործակցություն ապահովելու նպատակով
- Իրականացնել փորձի փոխանակում
- Կազմակերպել քննարկումներ ԱՀՈՒ տարբեր ձևերի՝ <<Աշակերտական / Ուսանողական ընկերությունների>> դուալ կրթության, աշկերտության վերաբերյալ, ինչպես նաև հանդիպումներ տարբեր ոլորտի գործատուների հետ, ովքեր կվարեն վարպետաց դասեր և դասընթացներ <<Աշակերտական / Ուսանողական ընկերությունների>> գործունեության իրականացման, փաստաթղթավորման, բիզնես պլաններ գրելու կանոնների, սոցիալական ձեռներեցության պատասխանատվության թեմաներով

Մասնակցելով <<Ամառային ճամբար / բիզնես դպրոց 2022>> ծրագրին՝ ուսումնասիրել եմ <<Աշակետական / Ուսանողական Ընկերության>> էությանը, ինչպես նաև ծանոթացել գործող ընկերությունների հետ, որի արդյունքում ծագել է ուսանողական ընկերություն հիմնելու գաղափարը:

<<Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ) – համագործակցություն Հարավային Կովկասում>> ծրագրի կարևոր բաղադրիչներից է աշակերտների և ուսանողների շրջանում ձեռնարկատիրական մտածելակերպի զարգացումը: Այդ նպատակով Ծրագրի շրջանակներում, <<Բիզնես և Կրթություն Գործընկերություն>> հիմնադրամի նախաձեռնությամբ Հայաստանի կրթական հաստատություններում ներդրվել է գերմանական <<Աշակերտական / Ուսանողական Ընկերություն>> հաջողված մոդելը: <<Աշակերտական / Ուսանողական Ընկերությունները>> ստեղծվում են մեկ ընդհանուր բիզնես գաղափարի շուրջ՝ աշակերտների / ուսանողների, նրանց ուսուցիչների / դասախոսների և ծնողների համագործակցությամբ: <<Աշակերտական / Ուսանողական Ընկերություններ>> մոդելը հանդիսանում է աշխատանքի վրա հիմնված (ԱՀՈՒ) / դուալ ուսուցում: Նպատակներն են՝

- Խթանել և զարգացնել ձեռնարկատիրական գիտելիքները և հմտությունները աշակերտների և ուսանողների շրջանում

- Խթանել գաղափարների իրականացմանը
- Զարգացնել գործարար մտածելակերպը
- Ուղղել հայացքը՝ շուկայական տնտեսությանը
- Բարձրացնել ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը
- Աջակցել աշակերտների և ուսանողների կարիերայի ուղղորդմանը
- Զարգացնել կարևոր առանցքային հմտությունները
- Նպաստել անկախ և թիմային աշխատանքային գործունեությանը
- Սովորեցնել պլանավորել և գործել սեփական պատասխանատվությամբ
- Նպաստել խնդիրներին ուղղված ինքնուրույն լուծումներ տալու ունակությունների զարգացմանը
- Բացահայտել սեփական շահերն ու իրավասությունները
- Նպաստել մոտիվացված ուսուցմանը
- Սովորեցնել թիմային աշխատանքին և այլն

<<Աշակերտական / Ուսանողական Ընկերություններ>> գործում են հետևյալ ոլորտներում.

- Կավագործություն
- Խոհարարություն
- Արևային մարտկոցների տեղադրում և սպասարկում
- Վարսահարդարում
- Պոլիգրաֆիական արտադրություն (տպագրություն)
- Թեյի արտադրություն
- Համակարգիչների սպասարկում
- Էկո պայուսակների արտադրություն
- Սննդի արտադրություն
- Հագուստի արտադրություն (կար ու ձև)
- Ձեռագործ հուշանվերների արտադրություն
- Պանրի արտադրություն (ընթացքի մեջ)
- Զբոսաշրջային ծառայություններ
- Միջոցառումների կազմակերպում
- Ոսկերչություն

<<Աշակերտական / Ուսանողական Ընկերությունները>> համագործակցում են՝ միմյանց տրամադրելով անհրաժեշտ ապրանքներ, ծառայություններ, խորհրդատվություններ և այլ ռեսուրսներ, ինչպես նաև իրականացնում են վերապատրաստման դասընթացներ նորաստեղծ ընկերությունների համար:

ԱՄՓՈՓ ԲԱԺԻՆ

<<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերությունը՝ կազմակերպություն է, որի շրջանակներում բեմադրվելու և ցուցադրվելու են ներկայացումներ, կազմակերպվելու են միջոցառումներ, սեմինարներ, վարպետաց դասեր և համագործակցություններ: Ուսանողական ընկերության կարևորագույն նպատակն է մշակութային արժեքների ստեղծումը և ամրապնդումը հասարակության, գլխավորապես՝ թիրախային խմբի մոտ:<<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերությունը շահույթ չհետապնդող կազմակերպություն է: <<Աշակերտական / Ուսանողական Ընկերություններ>> մոդելը աշխատանքի վրա հիմնված (ԱՀՈՒ) / դուալ ուսուցում է, որի նպատակներն են՝

- Բարցրացնել ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը: Այսինքն հնարավորություն տալ ուսանողներին իրենց մասնագիտությունը ուսումնասիրել ոչ միայն տեսականորեն այլ նաև պրակտիկ կերպով: Գործունեության ընթացքում հասկանալ մասնագիտության նրբությունները և առանձնահատկությունները: Ձեռք բերել որոշակի փորձ տվյալ ոլորտում
- Նպաստել անկախ և թիմային աշխատանքային գործունեությանը: Այսինքն սովորեցնել ուսանողներին կատարել անկախ աշխատանք սեփական պատասխանատվության վրա հիմնվելով, ինչպես նաև սովորել աշխատել թիմում առողջ քննարկումներ կատարելով և ընդհանուր փոխհամաձայնության գալով
- Ստեղծել սերտ կապեր և համագործակցություններ: Ինչպես յուրաքանչյուր կազմակերպությունում այնպես էլ <<Աշակերտական / Ուսանողական Ընկերություններ>> - ում շատ մեծ նշանակություն և կարևորություն ունի սերտ համագործակցությունը,տվյալ դեպքում ՝ ուսանողների, դասախոսների և այլ ուսանողական ընկերությունների միջև
- Նպաստել խնդիրներին ուղղված ինքնուրույն լուծումներ տալու ունակությունների զարգացմանը: Ուսանողները բախվելով խնդիրների և բարդությունների հետ կսովորեն հաղթահարել դրանք, փնտրել այլընտրանքային տարբերակներ, կիրառել ինչպես գործող, այնպես էլ նորարարական խնդիրների լուծման տարբերակներ
- Նպաստել մոտիվացված ուսուցմանը: Այսինքն, տալով ուսանողներին գիտելիքների ավելի լայն կիրառական գոտի, կմոտիվացնենք նրացն կրթական ծրագրերի ուսուցման, ինչպես նաև ոչ ֆորմալ կրթության և լրացուցիչ գիտելիքների նկատմամբ հետաքրքրությանը
- Խթանել և զարգացնել ձեռնարկատիրական գիտելիքները և հմտությունները աշակերտների և ուսանողների շրջանում: Թույլ տալ աշակերտներին և ուսանողներին դեռ վաղ տարիքում սովորել, զարգացնել և կիրառել սեփական գիտելիքները և հմտությունները: Դարձնել ավելի նախաձեռնողական և հետագայում ավելի մրցունակ աշխատաշուկայում

<<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերության գլխավոր առավելություններից է հանդիսանում մասնագետների (դասախոսների) աջակցությունը, ովքեր կարող են ուղորդել ուսանողներին տալով լրացուցիչ գիտելիքներ, հմտություններ և խորհրդատվություններ: Քոլեջը տալիս է ոչ միայն նեղ մասնագիտական գիտելիքներ, այլ նաև ընդհանուր լրացուցիչ գիտելիքներ, որոնք թույլ են տալիս ծավալել նմանատիպ գործունեություն: Առավելություն է հանդիսանումնաև քոլեջի համագործակցությունը Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնի, Երևանի քաղաքապետարանի Պատանի հանդիսատեսի թատրոնի և Պետական Կամերային երաժշտական թատրոնի հետ, որի

շրջանակներում քոլեջի ուսանողները ուսանողական տոմսերի միջոցով կարող են անվճար դիտել ներկայացումներ, որի շնորհիվ կարող են ուսումնասիրել մասնագետների հմտությունները և կատարելագործել սեփական ունակությունները: Քոլեջում գործող <<Ուրիշ>> թատրոնը իր գործունեության տարիների ընթացքում ձեռք է բերել բարձր հեղինակություն, ճանաչվել և սիրվել հանդիսատեսի կողմից: Ուսանողական ընկերությունը, համագործակցելով <<Ուրիշ>> թատրոնի հետ, կստեղծի ծրագիր, որը կմիավորի քոլեջի բոլոր մասնագիտությունների ուսանողներին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ:<<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերության գործունեության ժամանակ քոլեջի բոլոր մասնագիտությունների ուսանողները կունենան իրենց դերն ու նշանակությունը: Շուկայաբանության (մարքեթինգի) ոլորտը կզբաղվի կազմակերպության առաջխաղացման, համագործակցությունների, տեղեկատվության տրամադրման, միջոցառումների կազմակերպման և այլ նմանատիպ գործունեությամբ: Դերասանական արվեստի, ռեժիսուրայի և պարարվեստի ոլորտները կզբաղվեն ներկայացումներ մշակելու, բեմադրելու և խաղալու գործունեությամբ: Խոհարարական բաժինը միջոցառումների համար կպատրաստի ֆուրշետներ, կանցկացնի մասնագիտական մրցույթներ և այլ նմանատիպ գործունեություններ: Ոսկերչական բաժինը կարող է անցկացնել աշխատանքների ցուցահանդեսներ, մասնագիտական մրցույթներ, զարդեր պատրաստել ներկայացումների համար: Բոլոր ոլորտները հնարավորություն կունենան անցկացնել վարպետաց դասեր, սեմինարներ և փորձի փոխանակման վրա հիմնված ծրագրեր: <<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերության ստեղծումը կնպաստի քոլեջի ուսանողների միասնականությանը, տարբեր մասնագիտությունների միջև փոխհարաբերությունների և համագործակցությունների ամրապնդմանը, մասնագիտական գիտելիքների կատարելագործմանը և մոտիվացված ուսմանը:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ (ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ)

<<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերությունը ծրագիր է, որը հնարավորություն կտա իրականացնել տոմսավաճառություն, որի շնորհիվ ձեռք կբերվեն ֆինանսական ռեսուրսներ կազմակերպության գործունեության համար: Ուսանողական ընկերությունը գործելու է նաև ինքնաֆինանսավորման շնորհիվ, հիմնվելով սեփական միջոցների վրա: Ձեռք բերված ռեսուրսները ամբողջությամբ ուղղված են լինելու ուսանողական ընկերության գործունեությանը և թատրոնի բարելավմանը: <<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերության գործունեության ընթացքում ակընկալվում է գտնել հովանավորներ, ովքեր ֆինանսական աջակցություն կցուցաբերեն կազմակերպության հետագա գործունեության համար: <<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերության համար շատ կարևոր նշանակություն ունի կազմակերպության սոցիալական ուղղվածությունը, արժեքները և հասարակության բարելավվումը:

<<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերության գործունեության նպատակներն ու ծրագրերն են.

- Ներկայացումների բեմադրում և ցուցադրում: <<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերության ներկայացումները ցուցադրվելու են գլխավորապես քոլջի <<Ուրիշ>> թատրոնում: Ներկայացումներին և միջոցառումներին հրավիրվելու են հանրակրթական դպրոցների աշակերտները մշակութային արժեքների և արվեստի նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելու նպատակով, ինչպես նաև հետագայում պոտենցիալ ուսանողներին քոլեջի հետ փոքրինչ ծանոթացնելու համար: Դա նաև կնպաստի աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը և առկա հնարավորությունների մասին տեղեկացվածությանը: Ցուցադրվելու են նաև համագործակցության սկզբունքով այլ կրթական հաստատություններում կախված նրանից, թե ինչ տարիքային խմբի համար է նախատեսված տվյալ ներկայացումը: Ուսանողական ընկերության գործունեության շրջանակներում ներկայացումները ցուցադրվելու են նաև մանկատներում բարեգործական սկզբունքով, դրա գլխավոր նպատակն է հանդիսանում երեխաներին ծանոթացնել թատրոնի և արվեստի հետ: Հետագա համագործակցությունների շրջանակներում հնարավորություն տալ համատեղ ներկայացումներ բեմադրել տվյալ ոլորտի այլ հաստատությունների հետ: Նմանատիպ համագործակցությունները և ծրագրերը նպաստում են փորձի փոխանակմանը, ինչպես նաև նոր ծանոթություններին ու հնարավորություններին բացահայտմանը մասնագիտական ոլորտում: Ներկայացումներին հրավիրվելու են շատ պատվավոր հյուրեր՝ մեր քոլեջի և ուսանողական ընկերության գործունեությանը ծանոթացնելու, հնարավոր համագործակցություններ ձեռք բերելու, ինչպես նաև երիտասարդ սերնդի գիտելիքներին, ունակություններին, արժեքներին և ձգտումներին ծանոթացնելու նպատակով
- Սեմինարներ և վարպետաց դասեր իրականացնել քոլեջի ներսում: Նմանատիպ միջոցառումեր իրականացնել ոչ միայն քոլեջում առկա մասնագիտությունների վերաբերյալ՝ որոնց նպատակն է հանդիսանում մասնագիտական գիտելիքների և կարողությունների կատարելագործումը, այլ նաև ուրիշ ոլորտների վերաբերյալ՝ նոր գիտելիքներ ստանալու և լայն շրջահայացք ունենալու նպատակով: Իրականացնել ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ սեմինարներ՝ այն թեմաներով, որոնք պետք է իմանա յուրաքանչյուր քաղաքացի

- Անցկացնել վարպետաց դասեր ուսանողներին հետաքրքիր, ոչ ստանդարտ ֆորմատով
- Ձեռք բերված ֆինանսական ռեսուրսների շնորհիվ հնարավորինս բարելավել թատրոնի պայմանները
- Ավելի շատ ուսանողներ ընդգրկել ուսանողական գործունեությանը: Հնարավորություն տալ զարգանալ և կատարելագործվել սեփական մասնագիտության շրջանակներում, ինչպես նաև փորձել իրենց այլ ոլորտում և բացահայտել սեփական պոտենցյալը
- Անցկացնել միջոցառումներ հրավիրելով քոլեջի շրջանավարտներին: Գլխավոր նպատակն է հանդիսանում, որ շրջանավարտները պատմեն ուսանողներին սեփական փորձի մասին, տան խորհուրդներ, կիսվեն ձեռք բերված հմտություններով
- Սերտ համագործակցություն ամրապնդել ոչ միայն ուսանողների միջև, այլ նաև դասախոս – ուսանող հարաբերություններում: Դասախոսները համագործակցելով ուսանողների հետ՝ կտրամադրեն նրանց լրացուցիչ և ավելի խորը գիտելիքներ, կաջակցեն նրանց կարիերայի ուղղորդմանը, ինչով կնպաստեն հետագայում ավելի նախաձեռնողական և հմուտ մասնագետների առկայությանը աշխատաշուկայում

<<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերության գործունեության իրավական դաշտը քոլեջն է: Ուսանողական ընկերությունը հիմնական գոծունեությունը ծավալելու է քոլեջի ներսում: Ուսանողական ընկերությունը հաշվետու է լինելու քոլեջի տնօրինության առջև: Կազմակերպության գործունեության (միջոցառումների, համագործակցությունների...) վերաբերյալ որոշումները կայացվելու են տնօրինության հետ համատեղ: Ուսանողական ընկերությունը կատարելու է իր գործունեությունը հաշվետվություն ներկայացնելով աշխատանքի ընթացքի և արդյունքների վերաբերյալ: Այս գործընթացը տեղի է ունենալու հետևյալ կերպ.

- <<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերությունը ունենալու է գաղափար, քննարկելու է այդ գաղափարի ռիսկերը, մշակելու է իրագործման տարբերակներ, կատարելու է վերլուծություն: Այս գործողությունների բարեհաջող արդյունքների դեպքում անցնելու է հաջորդ փուլին
- Ուսանողական ընկերության նախագահը միայնակ կամ այլ անդամների հետ (ըստ անհրաժեշտության) ծրագիրը ներկայացնելու է տնօրինությանը և տնօրինության հետ համատեղ որոշում կայացնելու ծրագրի իրագործման վերաբերյալ:
- Ծրագիրը հաստատելուց հետո ուսանողական ընկերությունը սկսում է ծրագրի իրագործում
- Ծրագրի ավարտից հետո անցկացվում է ծրագրի արդյունքների ամփոփում ուսանողական ընկերության հետագա քայլերի համար: Ծրագրի արդըունքները ներկայացվելու են քննարկվելու են տնօրինության հետ

<<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերության գործունեության արդյունքում կազմակերպության հետագա պլաններում ակնկալվում է գտնել հուսալի և երկարատև հովանավորներ, ովքեր կկարողանան իրենց աջակցությամբ բարելավել քոլեջի և թատրոնի պայմանները, նպաստել ուսանողական ընկերույան գործունեությանը, ստեղծել պայմանների ավելի լայն գործունեության համար:

ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԲԱԺԻՆԸ

<<Ուրիշ>> թատրոնը իր գործունեության տարիների ընթացքում ձեռք է բերել փորձ, հմտություններ և ունեցել է հաջողություններ: Ուսանողական ընկերության ստեղծումը <<Ուրիշ>> թատրոնին կտա մի շարք հնարավորություններ ինչպես նաև նպաստավոր պայմաններ կստեղծի հետագա առաջխաղացման, զարգացման և կատարելագործման համար: <<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերությունը իր գործունեության արդյունքներով և հաջողություններով կնպաստի նաև քոլեջի բարելավմանը:

Ուսանողական ընկերության գործունեությունը ուղված է մի քանի թիրախային խմբերի և թիրախային խմբերին համապատասխան իրականացվելու են տարբեր մարքեթինգային քայլեր: Քանի, որ <<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերության գործունեությունը ունի սոցիալական ուղղվածություն և ունի մի շարք նպատակներ, հետևաբար այդ նպատակների իրագործման համար թիրախավորվում են հասարակության տարբեր սեգմենտներ: Ուսանողական ընկերության թիրախային խմբերն են.

- Խոշոր կազմակերպությունները, ձեռնարկատերերը, պետական մարմինները, կրթական և մշակութային ուղղվածության կազմակերպությունները, անհատները և բոլոր այն իրավաբանական անձիք, ովքեր կարող են հանդիսանալ պոտենցիալ հովանավորներ: Տվյալ թիրախային խմբին ուղղված մարքեթինգային քայլերը կնպաստեն հուսալի, հարմար պայմաններով և երկարաժամկետ հովանավորներ գտնելուն:
- Դպրոցականները, մասնավորապես՝ 7-9 – րդ դասարանի աշակերտները: Կազմակերպության գործունեությունը կնպաստի տվյալ տարիքային խմբի մշակութային արժեքների ձևավորմանը և ամրապնդմանը, արվեստի նկատմամբ հետաքրքրությանը, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշմանը: Նաև տվյալ թիրախային խմբի ներկայացուցիչները հանդիսանում են ապագա պոտենցիալ ուսանողներ և միջոցառումները կնպաստեն պոտենցյալ ուսանողների ծանոթացմանը քոլեջի մասնագիտությունների, պայմաններիր և առկա հնարավորությունների հետ:
- Քոլեջները, ուսումնարանները, արվեստի դպրոցները, ավագ դպրոցները: Գործունեության ընթացքում կկազմակերպվեն միջողառումներ տարբեր տեսակի համագործակցությունների շրջանակներում: Միջոցառումները ուղղված կլինեն միմյաց նոր գիտելիքներ և հմտություններ փոխանցելուն, գործունեությունևերին աջակցելուն, փորձի փոխանակմանը, ինչպես նաև կնպաստեն <<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերության և քոլեջի ճանաչելիության աստիճանի բարձրացմանը:

Կարևորագույն նպատակն վերանշյալ թիրախային խմբերին ուղղված գործողությունները, որոնք կնպաստեն թիրախային խմբերի ներկայացուցիչների առավել բավարարվածությանը: Տվյալ նպատակի իրագործման համար կատարվել է ուսումնասիրություն, հիմնվելով՝ հարցումների, տեղեկությունների և առկա օրինակների վրա: Այս հարցում նշանակություն ունեն իրականցվող միջոցառումները, միջոցառումների պլանավորումը և անցկացման ձևը: Ըստ հետազոտությունների արդյունքի <<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերության առաջխաղացման հարցում շատ մեծ կարևորություն և նշանակություն ունի սոցիալական մեդիայի մարքեթինգի իրականացումը:

<<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերությունը ակտիվորեն զբաղվելու է SMM- ով (Սոցիալական մեդիայի մարքեթինգ): Դա կնպաստի լսարանի մեծացմանը և ուսանողական ընկերության գործունեության նկատմամբ ուշադրության բարձրացմանը սոցիալական հարթակների միջոցով: Սոցիալական մեդիայի մարքեթինգում հիմնական շեշտադրումը կատարվում է այն կոնտենտի ստեղծման վրա, որը մարդիկ ինքնուրույն կտարածեն սոցիալական կայքերի միջոցով՝ առանց կազմակերպչի մասնակցության: Համարվում է, որ հաղորդագրությունները, որոնք փոխանցվում են սոցիալական ցանցերի միջոցով, մեծ վստահություն են առաջացնում տվյալ ծառայության պոտենցիալ սպառողների մոտ: Դա կապվում է սոցիալական մեդիայի տարածման խորհրդատվական համակարգի հետ՝ ի հաշիվ սոցիալական կապերի, որ ընկած են փոխազդեցության հիմքում: Ինչպես նաև դա շատ լավ միջոց կդառնա տեղեկատվության ավելի լայն տարածման հանար: Ուսանողական ընկերությունը ունենալու է էջեր Facebook, Instagram և YouTube հարթակներում: Էջերը պարունակելու են՝ նկարներ, գրառումներ և տեսահոլովակներ մոտ ժամանակաշրջանում իրականացվող ինչպես նաև արդեն իրականացված միջոցառումների վերաբերյալ: Տեղեկություն ապագա միջոցառումների վայրի (կոնկրետ հասցե), ժամի և բնույթի վերաբերյալ: Նկարներ և տեսահոլովակներ արդեն իրականցված միջոցառումներից (Ուսանողական ընկերության, քոլեջի ներկայացուցիչների, միջոցառումների մասնակիցների, քոլեջի ուսանողների, հրավիրված հյուրերի հետ և նկարներ միջոցառման ընթացքից), նկարագրություն միջոցառման մասին (միջոցառման բնույթի, մասնակիցների և հյուրերի վերաբերյալ): Տեղեկատվություն ուսանողական ընկերության մասին և կապ հաստատելու միջոցների վերաբերյալ: Տեղեկատվություն կատարվող գործունեության, ինչպես նաև համագործակցությունների մասին: Գովազդային բնույթի գրառումներ, նկարներ և այլն:

Facebook-յան հարթակը գլխավորապես ուղղված է լինելու պոտենցիալ հովանավորների թիրախային խմբին մեր մասին տեղեկացնելու, հետաքրքրություն և վստահություն առաջացնելու, հետագայում նաև համագործակցելու նպատակով:

Instagram-յան հարթակը գլխավորապես ուղղված է լինելու պոտենցիալ ուսանողների (դպրոցականների) թիրախային խմբի մասնագիտական կողմնորոշմանը, մեր քոլեջի հետ ծանոթացնելու, հետաքրքրություն և ձգտում առաջացնելու, ինչպես նաև առկա հնարավորությունների վերաբերյալ տեղեկացնելու համար:

YouTube-յան հարթակը ուղղված է լինելու արդեն իսկ հետաքրքրություն առաջացրած թիրախային խմբին ավելի ծավալուն և ավելի մանրամասն տեղեկություն տրամադրելու համար: YouTube-յան հարթակը իր կոնտենտի տեսակով ավելի հարմար է երկար տևողության տեսահոլովակներ տարածելու համար: Հրապարակվելու են դասընթացների, միջոցառումների, վարպետաց դասերի, տեղեկատվական, գովազդային և այլ բնույթի տեսահոլովակներ:

Ուսանողական Ընկերությունը հիմնվելու և գործելու է <<Ուրիշ Թատրոն>> անվան տակ, քանի որ այն <<Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջ>> -ի ներքո տարիներ շարունակ ծավալել է իր գործունեությունը <<Ուրիշ>> թատրոն անվան տակ և այդ ժամանակաշրջանում ձեռք է բերել ճանաչում, լավ հեղինակություն և համակրանք հանդիսատեսի կողմից: Տարբերանշանը (լոգոտիպ) նույնպես մնալու է նույնը, քանի որ այն արդեն ունի ճանաչելիություն: Սակայն հետագայում հնարավոր է տեղի ունենան փոփոխություններ կամ թարմացումներ տարբերանշանի (լոգոտիպ) վերաբերյալ, բայց բուն տարբերանշանը մնալու է նույնը:

Ուսանողական ընկերությունը ակտիվորեն համագործակցելու է ոչ միայն այլ կազմակերպությունների (Ուսումնական հաստատություններ, ֆիզիկական և իրավաբանական անձիք) հետ, այլ նաև քոլեջի ներսում գտնվող կառույցների հետ: Մշտապես համագործակցելու է <<Ուրիշ>> ուսանողական խորհրդի հետ, միմյաց աջակցելով և անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրելով:

Ուսանողական ընկերության կազմավորումը կնպաստի նաև պետական (կրթական) կառույցների հետ համագործակցություններին, ինչպես նաև պետական միջոցառումների ընդգրկամնը (համաժողովներ, EXPO, ցուցահանդես-վաճառքներ, դասընթացներ և այլն):

<<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերությունը արդեն համագործակցում է տիկին Մարինե Ժամկոչյանի հետ, ով <<Բիզնես և Կրթություն Գործընկերություն>> հիմնադրամի հիմնադիր նախագահն է, <<Բիզնես և Կրթություն>> Ասոցացիայի նախագահը, <<Մասնագիտական կրթություն և ուսուցում-համագործակցություն>> ծրագրի ղեկավարը, ինչպես նաև քոլեջի կառավարման խորհրդի անդամ է: Տվյալ համագործակցություն մեծ հնարավորություններ և նախադրյալներ է ստեղծում կազմակերպության հետագա առաջխաղացման համար: Ուսանողական ընկերությունը հետագայում կարող է համագործակցել նաև գործող ուսանողական ընկերությունների հետ, որոնք գործում են պոլիգրաֆիական արտադրության (տպագրության), համակարգիչների սպասարկման, հագուստի արտադրության (կար ու ձև), ձեռագործ հուշանվերների արտադրության և այլ ոլորտներում:

Եզրափակիչ Բաժին

<<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերության կազմավորումը իրենից ներկայացնում է գաղափար, որը ունի բոլոր անհրաժեշտ նախադրյալները և նախապայմանները իր արդյունավետ գործունեությունը իրականացնելու համար: Սա մի գաղափար է, որը կնպաստի՝ արժեհամակարգի ձևավորմանը և ամրապնդմանը, քոլեջի բարելավմանը և առաջխաղացմանը, ուսանողների մասնագիտական աճին, ուսանողների նախաձեռնողականությանը, կընդգրկի քոլեջի բոլոր մասնագիտություններից ուսանողներ մեկ գաղափարի շուրջ, կնպաստի աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը: Այն Կձևակերպի ամուր կապ՝ ուսանող-դասախոս, ուսանող-ուսանող, ուսանողական ընկերություն-կազմակերպություն և ուսանողական ընկերություն-հասարակություն փոխհարաբերություններում: Ընկերության ծրագրերի իրականացման արդյունքում ուսանողական ընկերությունը (քոլեջը) ձեռք կբերի հովանավորներ հետագայում ավելի մասշտաբային և ավելի արդյունավետ գործունեություն իրականացնելու համար: Ուսանողական ընկերության գործունեությունը քոլեջի կրթության հետ համատեղ որպես վերջնական արդյունք կնպաստի նաև կիրթ, բարձր արժեհամակարգով, նախաձեռնողական և աշխատունակ, մասնագիտական բարձր գիտելիքներով և փորձով, աշխատաշուկայում մրցունակ ուսանողների պատրաստմանը: <<Ուրիշ Թատրոն>> ուսանողական ընկերությունը իրենից ներկայացնում է հնարավորություն երազանքների և նպատակների իրագործման համար: